ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 754 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 513-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 05536278) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2026 թվականի օգոստոսի 13-ի «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Բնապահպանական պայմանների բարելավում» ծրագրի մասին» N 513-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արպանիվ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 09209297) 2026 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված՝ N ԿԲՀ-ԱԱՊ-ԳՀ-ԱՊՁԲ-26/15 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ավտոմեքենայի անիվների ձեռքբերում՝ 483,333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Տոնոյան Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 05548723) և «ԷՄԹԻԵՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 00497639) հետ 2026 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված՝ N ԿԲՀ-ԱԱՊ-ԳՀ-ԱՇՁԲ-26/17 քառակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոնի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 16,350,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

20.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ